Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1074[5]-16.05.2025-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի «8. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժնում՝

1) 8.5.3-րդ ենթակետի «բակալավրի կրթական ծրագրի իրականացման համար» բառերը փոխարինել «բարձրագույն կրթության առաջին մակարդակին (բակալավր) համապատասխան կրթական ծրագիր իրականացնելու համար» բառերով.

2) 8.5.5-րդ ենթակետի «մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման համար» բառերը փոխարինել «բարձրագույն կրթության երկրորդ մակարդակին (մագիստրոս) համապատասխան կրթական ծրագիր իրականացնելու համար» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.5.6-րդ և 8.5.7-րդ ենթակետերով.

«8.5.6	բարձրագույն կրթության երրորդ մակարդակին (դոկտոր) համապատասխան կրթական ծրագիր իրականացնելու համար՝ տարեկան	բազային տուրքի 300-ապատիկի չափով
8.5.7	Բարձրագույն կրթության ծառայությունների իրականացման համար	բազային տուրքի 3000-ապատիկի չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: